ՈՉ ՖՈՐՄԱԼ ԵՎ ԻՆՖՈՐՄԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1062-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

????????? ????????????? ?????????????

? ? ? ? ?? ?

?? ?????? ?? ???????? ??????????????? ??????????? ????????? ?? ???????? ????? ?????????? ?? ????????? ????????????? ???????????? 2015 ??????? ?????????? 10-? N 1062-? ??????? ??? ???????????? ????????? ?????

«Կրթության մասին» օրենքի 26.1-րդ հոդվածի 6-րդ մասին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1.«Սահմանել՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգը՝ համաձայն հավելվածի»:

2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

????????? ?????????????? ?. ????????
????????

2026?. «------» « »

?????

Հավելված

ՀՀ կառավարության

2026 թվականի «- - -» « »

ԿԱՐԳ

ՈՉ ՖՈՐՄԱԼ ԵՎ ԻՆՖՈՐՄԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատումը և ճանաչումը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից անձի կարողությունների և սահմանված որոշակի չափանիշների համապատասխանության փաստը հավաստելու գործընթաց է: Չափանիշները որոշակի մասնագիտական չափորոշչի ուսումնառության արդյունքներին, զբաղմունքի նկարագրին կամ որոշակի կարողությանը ներկայացվող պահանջներ են (այսուհետ՝ չափանիշներ):

3. Գնահատումը և ճանաչումը կամավոր գործընթաց է, որին կարող է մասնակցել ցանկացած անձ (այսուհետ՝ թեկնածու), ով ցանկանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքում ձեռք բերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները պաշտոնապես ճանաչեն համաձայն սույն կարգի:

4. Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման համակարգով գնահատված ու ճանաչված արդյունքները հիմք են հանդիսանում աշխատաշուկա մուտք գործելու և տվյալ աշխատանքը կատարելու կամ զբաղմունքը իրականացնելու համար:

5. Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման ու ճանաչման գործընթացը կազմակերպում և համակարգում է՝ Նախարարության կողմից ընտրված՝ ոլորտում գործառույթ իրականացնող կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն):

2. ԳՆԱՀԱՏՈՂԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Կազմակերպությունը ձևավորում է մասնագիտական խումբ, որի կողմից իրականացվում է գնահատում:

7. Գնահատում իրականացնում են ուսուցման ազգային ռեեստրում գրանցված կազմակերպության մասնագետները և (կամ) ֆիզիկական անձինք (գնահատողներ)՝ համապատասխան մասնագիտական խմբում ընդգրկվելու միջոցով:

8. Ռեեստրում որպես գնահատող կարող են գրանցվել՝

1) մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպության մասնագետները,

2) արտադրական կամ ծառայություններ մատուցող կազմակերպության մասնագետները,

3) գործատուների ներկայացուցիչները,

4) անկախ մասնագետները և փորձագետները:

9. Գնահատողի կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները՝

1) առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,

2) 10 տարվա տվյալ ոլորտի փորձառություն,

3) գործատուի կողմից երաշխավորագիր:

10. Գնահատողի գարծառույթները՝

1) ընտրել գնահատման մեթոդները և պլանավորել գնահատումը,

2) սույն կարգի 12-րդ կետի համաձայն՝ ուսումնասիրել թեկնածուի կողմից ներկայացված փաստաթղթերը, որոնք հավաստում են, ցույց են տալիս իր կարողությունները գնահատելու և ճանաչելու համար դիմած թեկնածուի փաստացի ունակությունները,

3) դիտարկել և (կամ) քննել փաստաթղթերը՝ օգտագործելով ընտրված գնահատման մեթոդները,

4) գնահատման արդյունքների վերաբերյալ կազմել արձանագրություններ:

3. ՈՉ ՖՈՐՄԱԼ ԵՎ ԻՆՖՈՐՄԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՃԱՆԱՉՈՒՄԸ

11. Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատումն ու ճանաչումն իրականացվում է հետևյալ փուլերով՝ իրազեկում, դիմումի ներկայացում, գնահատում, ճանաչում

12. Իրազեկման փուլ՝

1) թեկնածուն տեղեկանում է գործընթացի հնարավորությունների և պայմանների մասին (օրինակ՝ Նախարարության պաշտոնական կայքում),

2) Նախարարության կողմից ընտրված կազմակերպությունը տրամադրում է խորհրդատվություն՝ հասկանալու արդյոք տվյալ անձը կարող է մասնակցել գնահատման և ճանաչման գործընթացին,

3) որոշվում է որ մասնագիտության կամ որակավորման մակարդակին է համապատասխանում տվյալ թեկնածուի հմտությունները:

13. Դիմումի ներկայացման փուլ՝

1) թեկնածուն լրացնում է դիմումի ձևաթուղթը՝ նշելով այն հմտությունը որի համար ցանկանում է ստանալ գնահատում և ճանաչում,

2) իր փորձի և ունեցած ուսումնական արդյունքների վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր,

3) կցում է անհրաժեշտ փաստաթղթեր՝ ինքնակենսագրություն, աշխատանքի փորձի հավաստագրեր, մասնակցության սերտիֆիկատներ, կատարած նախագծեր, երաշխավորագրեր գործատուներից:

14. Գնահատում՝

1) գնահատող հանձնաժողովը ուսումնասիրում է դիմումը, կազմում է անհատական գնահատման պլան նշելով գնահատման մեթոդները և ժամանակացույցը,

2) անցկացնում է գնահատում, որը ներառում է՝ թեստ (ստուգում է տեսական գիտելիքները տվյալ ոլորտում), հարցազրույց (պարզում է թեկնածուի

մասնագիտական մտածողությունը, խոսքի հստակությունը, փորձի խորությունը), գործնական առաջադրանք (կիրառական հմտությունների ստուգում),

3) գնահատման արդյունքների ամփոփում,

4) արդյունքները համամատվում է ազգային որակավորման չափանիշների հետ,

5) հանջնաժողովը որոշում է թեկնածուի որոշակի մասնագիտական չափորոշչի ուսումնառության արդյունքների, զբաղմունքի նկարագրի կամ որոշակի կարողությանը ներկայացվող պահանջներին համապատասխանությունը:

15. Ճանաչում՝

1) ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման գործընթացը հաղթահարած թեկնածուին շնորհվում է մասնագիտական որոշակի կարողության տիրապետելու մասին հավաստագիր՝ համաձայն N 1 ձևի, և նրա ներդիրը՝ համաձայն N 2 ձևի,

2) ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչումն գրանցվում է պաշտոնապես՝ Ուսուցման ազգային ռեեստրում,

3) ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման գրանցումը Ուսուցման ազգային ռեեստրում իրականացնում է Կազմակերպությունը:

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

16. Գնահատման և ճանաչման գործընթացի արդյունքների հետ անհամաձայնության դեպքում, թեկնածուն կարող է բողոքարկել կազմակերպությանը, ոչ ուշ քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ արդյունքի մասին տեղեկացվելու պահից սկսած:

17. Կազմակերպությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ձևավորում է բողոքարկման հանձնաժողով, որը եռօրյա ժամկետում բողոքարկման դիմում ներկայացրած թեկնածուին տալիս է պարզաբանում:

-

-

-

?? N 1

????????? ??????????????

?? ?????????, ?????????, ????????? ?? ?????? ?????????????

? ? ? ? ? ? ? ? ? ?

?? ?????? ?? ???????? ?????????????? ??????????? ????????? ?? ???????? ?????

CC NO 000000

????? ? _____ (????????
?????? (??????????), ?????????)

(????????? ???? _____)

?? ???, ?? ?? ____?. _____ ___ -?? _____?. _____ ?????????,

_____ ? ???????? ? _____

(????????? ????)

??????????????, ??????????, ??????????

????? ????????? ---------- ??????????? ?????? ????

_____ _____

(??????????????

???????? ????????????????)

_____ _____ _____ (վայրը) Գրանցման N _____

_____թ. (հավաստագրի դուրսգրման ամսաթիվը)

??????????? ??????? ?????????? ? ???????????????? ???????? ?????

-

-

-

-

-

-

-

-

?? N 2

???????? ???????????????? ??????????? ?? ??????????

NN ?/?	?????????????? ?????????	????????? ?????

1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			
7.			
8.			
9.			
10.			
	???????? ??????????? ??? ??????????? ? ????????		
11.			
12.			
13.			
14.			